ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 25

ք. Արտաշատ

< 28 > 03 2012թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ/ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված << Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման>> կարգի 69-րդ կետի 2) ենթակետով, 71-րդ կետի 2) ենթակետով և 73-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել Արարատի ներմարզային՝ <<Մասիս-Նիզամի>> միկրոավտոբուսային թիվ 02-024 երթուղում տրանսպորտային միջոցի փոփոխություն կատարելու մասին ՀՀ Արարատի ներմարզային ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիները ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին հատկացնելու մրցութային հանձնաժողովի 2012 թվականի մարտի 27-ի թիվ 1 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզպետի
2012թ. մարտի 28
թիվ 415 որոշման

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

2012թ. մարտի 27-ին կայացած մրցութային հանձնաժողովի նիստի

Նիստի նախագահ Ա. Մուրադյան

Նիստի քարտուղար Ա. Հակոբյան

Նիստին մասնակցում էին մրցութային հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա.Պողոսյանը, անդամներ Վ. Գրիգորյանը, Ս. Ղարիբյանը

Օրակարգ

<<Մասիս-Նիզամի>> թիվ 02-024 միկրոավտոբուսային երթուղում տրանսպորտային միջոցի փոխարինման մասին:

Լսեցին- << Մասիս-Նիզամի >> թիվ 02-024 միկրոավտոբուսային երթուղում տրանսպորտային միջոցի փոխարինման մասին:

Զեկուցող- հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մուրադյան

Արտահայտվեցին-Ա. Հակոբյանը, Ա. Պողոսյանը, Վ. Գրիգորյանը

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված կարգի 69-րդ կետի 2) ենթակետով, 71-րդ կետի 2) ենթակետով և 73-րդ կետով, հիմք ընդունելով երթուղին սպասարկող <<Լիգա>> ՍՊ ընկերության 2012 թվականի մարտի 23-ի գրությունը՝

Որոշեցին

<< Մասիս-Նիզամի >> թիվ 02-024 միկրոավտոբուսային երթուղին սպասարկող ԳԱԶ-32213 մակնիշի 1234Լ /867ՍԼ27/ պետհամարանիշի միկրոավտոբուսը փոխարինել ԳԱԶ-32213 մակնիշի 605SU25 պետհամարանիշի միկրոավտոբուսով:

| | |
|---|---|
| Նախագահ | Ա Մուրադյան /ստորագրություն/ |
| Տեղակալ | Ա.Պողոսյան /ստորագրություն/ |
| Քարտուղար | Ա.Հակոբյան /ստորագրություն/ |
| Անդամներ | Վ.Գրիգորյան /ստորագրություն/ |
| | Ս.Ղարիբյան /ստորագրություն/ |

Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 24 ք. Արտաշատ

< 22 > 03 2012թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ի N 68 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով <<ՀՀ Արարատի մարզի Բյուրավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի նախագահի գրությունը

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2010 թվականի հունիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի և Մասիսի տարածաշրջանների <<Պետական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման խորհուրդների կազմերը հաստատելու մասին>> N 68 որոշման հավելվածի 17-րդ տողում <<Հովհաննիսյան Լիլյա>> բառերը փոխարինել <<Ավետիսյան Արմինե>> բառերով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

N 23

«14» «03» 2012թ.

ք. Արտաշատ

### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2012 թվականի մարտի 2-ի N 180-Ա որոշումը՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում կատարել հետևյալ լրացումները՝

1) պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 62-2.1-1) անձնագրի 11-րդ կետը <<ը>> ենթակետից հետո լրացնել <<ը.1>>, <<ը.2>>, <<ը.3>>, <<ը.4>> ենթակետերով .

<<ը.1) համակարգում է Մարզպետարանի և մարզային ենթակայության ՊՈԱԿ-ների աշխատակիցների սոցիալական փաթեթից բխող աշխատանքների կազմակերպումը.

ը.2) կազմակերպում է սոցիալական փաթեթից բխող ըստ ծախսերի ուղղությունների հաստատված և հիմնավորված փաստաթղթերի ընդունման և ստուգման աշխատանքները.

ը.3) համակարգում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատկացված սոցիալական փաթեթի գումարների նախահաշիվների կազման, մարզային ենթակայության ՊՈԱԿ-ներին հատկացված գումարների շրջանակներում

կազմված նախահաշիվների ստուգման և հաստատման ներկայացնելու աշխատանքները.

ը.4) իրականացնում է սոցիալական փաթեթից բխող առողջապահության ապահովագրության կտրոնների ստացման, հատկացման և հաշվառման աշխատանքները.>>.

2) ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 62-2.2-14) անձնագրի 11-րդ կետը <<գ>> ենթակետից հետո լրացնել <<գ.1>> ենթակետով.

<<գ.1) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատկացված սոցիալական փաթեթի գումարների նախահաշիվների կազման, մարզային ենթակայության ՊՈԱԿ-ներին հատկացված գումարների շրջանակներում կազմված նախահաշիվների ստուգման և հաստատման ներկայացնելու աշխատանքները.>>.

3) ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 62-2.3-26) անձնագրի 11-րդ կետը <<ե>> ենթակետից հետո լրացնել <<ե.1>> ենթակետով .

<<ե.1) իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատկացված սոցիալական փաթեթի գումարների նախահաշիվների կազման, մարզային ենթակայության ՊՈԱԿ-ներին հատկացված գումարների շրջանակներում կազմված նախահաշիվների ստուգման և հաստատման ներկայացնելու աշխատանքները.>>.

4) ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 62-3.2-24) անձնագրի 11-րդ կետը <<ը>> ենթակետից հետո լրացնել <<ը.1>> ենթակետով .

<<ը.1) մասնակցում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մարզին հատկացված սոցիալական փաթեթի գումարների նախահաշիվների կազման, մարզային ենթակայության ՊՈԱԿ-ներին հատկացված գումարների շրջանակներում կազմված նախահաշիվների ստուգման և հաստատման ներկայացնելու աշխատանքներին.>>.

5) հաշվապահական հաշվառման բաժնի պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 62-2.2-15) անձնագրի 11-րդ կետը <<գ>> ենթակետից հետո լրացնել <<գ.1>> ենթակետով .

<<գ.1) սոցիալական փաթեթից օգտվողների հայտի հիման վրա կազմակերպում է ֆինանսավորման աշխատանքները.>>.

6) հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 62-3.2-25) անձնագրի 11-րդ կետը <<գ>> ենթակետից հետո լրացնել <<գ.1>> ենթակետով.

<<գ.1) իրականացնում է սոցիալական փաթեթից օգտվողների հայտի հիման վրա ֆինանսավորման աշխատանքները.>>.

7) հաշվապահական հաշվառման բաժնի առաջին կարգի մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր 62-4.1-19) անձնագրի 11-րդ կետը <<գ>> ենթակետից հետո լրացնել <<գ.1>> ենթակետով .

<<գ.1) մասնակցում է սոցիալական փաթեթից օգտվողների հայտի հիման վրա ֆինանսավորման աշխատանքներին.>>:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 22 ք. Արտաշատ

<<12>> <03> 2012թ.

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրանագրի 1.6.կետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով մարզին հատկացված գումարից 1000.0 (մեկ միլիոն) դրամ գումար հատկացնել մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ որպես դրամական օգնություն համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Սիմոնյանին՝ կատարել համապատասխան վճարումներ:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է.Ս. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2012թ.մարտ «12»
N 22 ՈՐՈՇՄԱՆ

# ՑՈՒՑԱԿ

Արարատի մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին
տրվող դրամական օգնությունների

1.Աբրահամյան Սվետլանա–20.0հազ. դրամ
2. Գալոյան Գայանե- 20.0 հազ. դրամ
3.Դեմիրճյան Սեդա -20.0 հազ. դրամ
4.Գրիգորյան Կարինե -20.0 հազ. դրամ
5.Կարապետյան Անահիտ -20.0 հազ. դրամ
6.Խաչիկյան Սուսաննա -20.0 հազ. դրամ
7.Թովմասյան Ելենա -20.0 հազ. դրամ
8.Եփրեմյան Լուսվարդ -20.0 հազ. դրամ
9.Ալոյան Արևհատ - 20.0 հազ. դրամ
10.Պետրոսյան Ջեմմա -20.0 հազ. դրամ
11. Ավդալյան Համիկ-20.0 հազ. դրամ
12.Աննա Սահակյան -20.0 հազ. դրամ
13.Սահակյան Վոլոդյա -30.0 հազ. դրամ
14.Պողոսյան Արտակ -30.0 հազ. դրամ
15.Սարգսյան Վոլոդյա -20.0 հազ. դրամ
16.Համբարձումյան Սաթենիկ -150.0 հազ.դրամ
17. Պողոսյան Սոնյա-50.0 հազ.դրամ
18.Մուրադյան Արայիկ -50.0 հազ.դրամ
19. Հակոբյան Գայանե-50.0 հազ.դրամ
20.Անդրեասյան Տիգրան-80.0 հազ.դրամ
21.Մինասյան Մարիամ-20.0 հազ.դրամ
22.Վարդանյան Գրիգոր-50.0 հազ.դրամ
23. Սիմոնյան Կարեն-50.0 հազ.դրամ
24. Ավետիսյան Անահիտ-40.0 հազ.դրամ

25.Դավթյան Շուշանիկ-20.0 հազ.դրամ

26.Գրիգորյան Շողիկ -10.0 հազ.դրամ

27.Առաքելյան Ավագ-50.0 հազ.դրամ

28. Մարգարյան Պետրոս-30.0 հազ.դրամ

29.Ասրյան Գևորգ-30.0 հազ.դրամ

*Ընդամենը՝ 1000.0հազ. դրամ*

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 21

ք. Արտաշատ

«12» 03 2012թ.

## ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 67-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1977 հրամանով հաստատված <<Բուժկանխարգելիչ կազմակերպություններում իմունականխարգելման գործընթացի պատասխանատուի>> ուղեցույցի 14-րդ կետը,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

Արարատի մարզի բուժկանխարգելիչ կազմակերպություններում իմունականխարգելման գործընթացում խորհրդատվական հանձնաժողովների ստեղծման անհրաժեշտությունից ելնելով, 1-2 բժիշկ ունեցող կազմակերպությունները կցել 3 և ավելի բժիշկ ունեցող կազմակերպություններին՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հավելված

ՀՀ Արարատի մարզպետի

2012 թվականի մարտի 12 -ի

N 27 որոշման

# Ց Ա Ն Կ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԿՑՈՒՄՆԵՐԻ

1. <<Արտաշատի ԲԿ>> ՓԲԸ-ին կցել՝
   - <<Ազատավանի ԱԱՊԿ>> ՓԲԸ
   - <<Դալարի ԱԱՊԿ>> ՓԲԸ
   - <<Մրգավանի ԲԱ>> ՓԲԸ
   - <<Շահումյանի ԲԱ>> ՓԲԸ
   - <<Քաղցրաշենի ԱԱՊԿ>> ՓԲԸ
   - <<Այգեզարդի ԱԱՊԿ>> ՓԲԸ
   - <<Կանաչուտի ԱԱՊԿ>> ՓԲԸ

2. <<Մխչյանի ԲԱ>> ՓԲԸ-ին կցել՝
   - <<Դիմիտրովի ԱԱՊԿ>> ՓԲԸ
   - <<Բուրաստանի ԱԱՊԿ>> ՓԲԸ

3. <<Վ. Արտաշատի ԲԱ>> ՓԲԸ-ին կցել՝
   - <<Այգեստանի ԱԱՊԿ>> ՓԲԸ
   - <<Նորաշենի ԱԱՊԿ>> ՓԲԸ
   - <<Վ. Դվինի ԲԱ>> ՓԲԸ
   - <<Դվինի ԱԱՊԿ>> ՓԲԸ

4. <<Արևշատի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ին կցել՝
   - <<Ջրաշենի ԱԱՊԿ>> ՓԲԸ
   - <<Գետազատի ԱԱՊԿ>> ՓԲԸ
   - <<Նշավանի ԱԱՊԿ>> ՓԲԸ

5. <<Մասիսի ԲԿ>> ՓԲԸ-ին կցել՝
   - <<Նորամարգի ԱԱՊԿ>> ՓԲԸ
   - <<Սիսի  ԲԱ>> ՓԲԸ
   - <<Ռանչպարի ԲԱ>> ՓԲԸ
   - <<Նորաբացի ԲԱ>> ՓԲԸ
   - <<Սայաթ - Նովայի ԱԱՊԿ>> ՓԲԸ
   - <<Դաշտավանի ԱԱՊԿ>> ՓԲԸ

6. <<Այնթապի ԲԱ>> ՓԲԸ-ին կցել՝
    - <<Նոր-Խարբերդի ԱԱՊԿ>> ՓԲԸ
    - <<Մարմարաշենի ԱԱՊԿ>> ՓԲԸ

7. <<Գեղանիստի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ին կցել՝
    - <<Արգավանդի ԱԱՊԿ>> ՓԲԸ
    - <<Արբաթի ԲԱ>> ՓԲԸ
    - <<Խաչփարի ԲԱ>> ՓԲԸ
    - <<Հովտաշատի ԱԱՊԿ>> ՓԲԸ
    - <<Հայանիստի ԱԱՊԿ>> ՓԲԸ
    - <<Դարակերտի ԱԱՊԿ>> ՓԲԸ

8. <<Վեդու ԲԿ>> ՓԲԸ-ին կցել՝
    - <<Լուսառատի ԲԱ>> ՓԲԸ
    - <<Ոսկետափի ԲԱ>> ՓԲԸ
    - <<Տափերականի ԲԱ>> ՓԲԸ
    - <<Արալեզի ԲԱ>> ՓԲԸ
    - <<Նոր-Կյանքի ԲԱ>> ՓԲԸ
    - <<Փ. Վեդու ԱԱՊԿ>> ՓԲԸ
    - <<Ուրցաձորի ԱԱՊԿ>> ՓԲԸ

9. <<Արարատի հիվանդանոց ԲԿ>> ՓԲԸ-ին կցել՝
    - <<Արմաշի ԱԿ>> ՓԲԸ
    - <<ՈԿՖ բանավանի ԱԱՊԿ>> ՓԲԸ

10. <<Արարատի ԲԱ>> ՓԲԸ-ին կցել՝
    - <<Նոյակերտի ԱԱՊԿ>> ՓԲԸ
    - <<Սուրենավանի ԲԱ>> ՓԲԸ
    - <<Ջանգակատան ԱԱՊԿ>> ՓԲԸ

11. <<Ավշարի ԲԱ>> ՓԲԸ-ին կցել՝
    - <<Այգավանի ԲԱ>> ՓԲԸ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 20

ք. Արտաշատ

<<22>> <<03>> 2012թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ**

**ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ**

**ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրանագրի 1.6.կետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով մարզին հատկացված գումարից 1000.0 (մեկ միլիոն) դրամ գումար հատկացնել մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ որպես դրամական օգնություն համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Սիմոնյանին՝ կատարել համապատասխան վճարումներ:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է.Ս. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2012թ. մարտի «02»
N 20 ՈՐՈՇՄԱՆ

# ՑՈՒՑԱԿ

Արարատի մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին
տրվող դրամական օգնությունների

1.Աղաբեկյան Կամո-35.0հազ. դրամ

2. Առաքելյան Ժենիկ- 60.0 հազ. դրամ

3.Ծահբազյան Անժելա -50.0 հազ. դրամ

4.Ափրեյան Նորիկ -100.0 հազ. դրամ

5.Թուխոյան Արմեն -70.0 հազ. դրամ

6. Դանիելյան Սուրեն-50.0 հազ. դրամ

7.Սեդրակյան Կարինե -50.0 հազ. դրամ

8.Հակոբյան Արմեն -20.0 հազ. դրամ

9.Հովհաննիսյան Մելինե -30.0 հազ. դրամ

10.Դադամյան Համիկ -30.0 հազ. դրամ

11.Մարտիրոսյան Նարինե - 30.0 հազ. դրամ

12.Վարդանյան Ֆերդինանտ -100.0 հազ. դրամ

13. Բաղդասարյան Գարեգին-50.0 հազ. դրամ

14.Պողոսյան Նվարդ -20.0 հազ. դրամ

15.Ասատրյան Նելլի -15.0 հազ. դրամ

16.Մարտիրոսյան Միքայել -50.0 հազ. դրամ

17.Լուլուկյան Սիրանուշ -50.0 հազ. դրամ

18.Հովսեփյան Ասյա -50.0 հազ.դրամ

19. Նահապետյան Գեղամ-90.0 հազ.դրամ

20.Սաֆարյան Կարինե-50.0 հազ.դրամ

*Ընդամենը՝ 1000.0հազ. դրամ*

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 19

ք. Արտաշատ

<01> 03 2012թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 09 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջով, հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի քաղաքի Խաչիկ Սողոմոնյանի անվան N 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2012թ. փետրվարի 22-ի գրությունը

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2011թ. փետրվարի 18-ի << <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների անվանափոխությունները և կանոնադրությունները հաստատելու մասին>> թիվ 09 որոշմամբ հաստատված << Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի քաղաքի Խաչիկ Սողոմոնյանի անվան N 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 3-րդ կետում <<Կայսյան փ. 5>> բառերը փոխարինել <Գայի փ. 3>> բառերով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ